ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/92

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ 26/9884-2019 գրությամբ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.06.2019թ. թիվ ՊՆ/02/811-2019 գրության պատճենի հիման վրա, 13.06.2019թ. թիվ 26/9884-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 19.06.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստերը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.06.2019թ. թիվ ՊՆ/02/811-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ և ՀՀ պետական եկամուտների կոմիտե հարցում է կատարվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց պարտավորություններ՝ 1 308 517 ՀՀ դրամ: Ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետը, որոշեց «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ընթացակարգի քննության նպատակով 19.06.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/92 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով ***<u>14.05.2019թ.</u>*** հայտ է ներկայացրել «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 27.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 1 308 517 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ 26/9884-2019

գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 10.06.2019թ. թիվ ՊՆ/02/811-2019 գրությունը՝ կից փաստաթղթերով, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 27.05.2019թ. եզրակացությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-7/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով ***14.05.2019թ.*** հայտ է ներկայացրել «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.05.2019թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի հիման վրա 22.05.2019թ. համապատասխան հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 27.05.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություն՝ 1 308 517 ՀՀ դրամի չափով:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.05.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված ***հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ

առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ***ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը գտնում եմ, որ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է Ընթացակարգին վերջինիս հետագա մասնակցության դադարեցմանը, քանի որ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի գտնում եմ, որ առկա են «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.06.2019թ. թիվ 26/9884-2019 գրությամբ «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ԳԱՆԱ ԳՐՈՒՊ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**